

«ՈՍԿԻՆ

ՈԶ-ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿ՝ ԱՊԱՍՏԱՆ Է»



Լիբանանի Կեդրոնական Դրամատան նախկին փոխ-կառավարիչ Մկրտիչ Պուլտուքեանի «վարդագոյն» ձեռով կը նկարէ դրամական ու ֆինանսական իրավիճակը՝ գալիք հանգրուանին: Ան կը տեսնէ որ Պէյրութ պիտի վերագտնէ տարածաշրջանին մէջ դրամական յառաջադէմ կեդրոնի դերը, յատկապէս՝ Լոնտոնէն՝ Սինկափուր, ինչպէս որ կանխատեսած էր 1977-ին:

Ան կը համարէ որ լիբանանեան դրամատնային բնագաւառը այսօր դարձած է ամրացուած ու հզօր, Լիբանանի Կեդրոնական Դրամատան եւ պահպանողական դրամատուններու ղեկավարութեանց քաղաքականութեան պատճառով:

Պուլտուքեան կը հաւատէ, որ ոսկիի գիները գալիք հանգրուանին պիտի մնան ներդրողներու ապահով ապաստանը՝ երբ տակաւին ամերիկեան տոլարին գինը թոյլ եւ նահանջի մէջ է, յիշեցնելով որ 2001 թուին կանխատեսեց թէ՛ ոսկիին գիները պիտի տեսնեն մրցանիշային ցատկեր:

Տնտեսական «Ալ-Պէյէն»-ը իր Յունուար 2010

բացառիկ թիւին մէջ, վրուցեց Պուլտուքեանի հետ Լիբանանի դրամատնային բնագաւառին վերաբերեալ ու Պէյրութի դերը որպէս դրամական կեդրոն տարածաշրջանին մէջ եւ ոսկիի գինին վարգացումներու մասին, տնտեսական համաշխարհային տագնապի մասին: Եւ վերջապէս՝ իր վերջին գիրքին մասին որ կը կրէ «Դրամատնային Համակարգը Լիբանանի մէջ (1630-2001)» խորագիրը, լոյս տեսած Սեպտեմբեր 2009ին:

Սկիզբը այս նոր գիրքին մասին էր, այս ժամանակահատուածին մէջ լոյս տեսնելու պատճառներուն մասին: Այդ հարցով, Պուլտուքեան կը պատասխանէ, թէ 4 գլխաւոր պատճառներ կան այս գիրքին լոյս ընծայման համար, այս ժամանակահատուածին:

« Առաջին պատճառը Պէյրութի 2009 թուին համաշխարհային գիրքի մայրաքաղաք հռչակումն է:

« Երկրորդ պատճառը՝ տեղական եւ տարածաշրջանային մակարդակով արձանագրած մեծ յաջողութիւնն է Լիբանանի դրամատնային բնագաւառին:

« Իսկ երրորդ պատճառը՝ ապա եւ իմ դրամատնային աշխատանքիս 50ամեակին առիթով է, սկսած 1959ին:

« Ապա եւ չորրորդ ու վերջին պատճառը՝ ցանկութիւնն է լուսարձակը կեդրոնացնելու Լիբանանի Կեդրոնական Դրամատան եւ դրամատնային տնօրէնութեանց իմաստուն քաղաքականութեանց վրայ, որ պատճառ դարձաւ Լիբանանի դրամատնային համակարգին հանդէպ վստահութեան աւելացման:

ԱՊԱՀՈՎ ԱՊԱՍՏԱՆ

Ոսկիի ապագային մասին՝ Լիբանանի Կեդրոնական Դրամատան նախկին փոխ-կառավարիչը կ'ըսէ:

2001-2006 եւ վերջապէս 2009 թուականի Մարտին կանխատեսեցի թէ ոսկիին գիները աննախընթաց բարձրացման ալիքներ պիտի տեսնեն: Նաեւ բազմաթիւ առիթներով ըսի, թէ ոսկիի օնսային գինը հապար տոլարի սահմանը պիտի անցնի, 2010ին՝ ինչպէս որ եղաւ:

Իմ կարծիքով, ոսկիին գինը կայուն եւ ուժեղ շրջանակին մէջ պիտի մնայ՝ տոլարին գնողական փոխարժէքին թուլութեան եւ նահանջին պատճառով, ինչպէս նաեւ այլ պետութեանց անկարողութիւնը տոլարը փոխարինող դրամանիշ գտնելու՝ հիմնական տնտեսական փոխանակութեանց համար (նաֆթ, հացահատիկ, պէնք): Մինչ համաշխարհային առեւտուրի 80 տոկոսը կապուած է ամերիկեան տոլարին հետ: Այնպէս որ կը տեսնենք թէ՛ այնքան ատեն որ տոլարը թոյլ շրջանակի մէջ է, ապա եւ դեղին մետաղին գիները փոխադարձ կերպով կայուն եւ ուժեղ պիտի ըլլան եւ այս մետաղը ոչ-կարճ ժամանակի մը համար պիտի ներկայացնէ ապահով ապաստան մը տոլարին հանդէպ իրենց վստահութիւնը կորսնցուցած շատ երկիրներուն համար՝ ինչպէս ասիական պետութիւններն են՝ որոնք տակաւին տոլար փոխարժէքով ոսկի գնելը կը հետապնդեն այս ժամանակաշրջանին:

Պուլտուքեան կ'աւելցնէ, որ հակառակ իր բարձրացման՝ տոլարը կը մնայ չարիք որմէ կարելի չէ խուսափիլ, անհրաժեշտ չարիք- mal nécessaire:

Պուլտուքեան կը շարունակէ, որ հոգեբանական գործօնը անհատներու եւ կառավարութեանց եւ ընկերային շրջանակներու մէջ՝ կը նպաստէ ոսկիին գիներուն վրայ ապդելու: Ապա ինչպէս համաշխարհային տնտեսական ճգնաժամէն, բաժնատուներու, մուրհակներու, դրամանիշերու արժէքաչրկումէն եւ դրամատնային տոկոսներու աստիճանաբար նուազումէն ետք, որ գրեթէ վերօ տոկոսի հասաւ մօտաւորապէս: Այս բոլորը կը մղեն եւ մղելու են անձանց եւ կառավարութեանց՝ փախչելու դրամատուներէն եւ դրամանիշերու շուկայէն դէպի ապահով ապաստանը՝ ոսկին, ամենէն ամուր արժէքը պատմութեան հինէն ի վեր:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Համաշխարհային ճգնաժամի մասին... Ու Լիբանան. Պուլտուքեան կ'ըսէ. "Լիբանանի գործելակերպը ընդհանրապէս եւ իր դրամատնային բնագաւառը մասնաւորապէս հեռու մնալու համաշխարհային ճգնաժամի բարդութիւններէն՝ շարք մը պատճառներու արդիւնք է, որոնցմէ ամենէն կարեւորը կը մնայ այն ցուցմունքները, որոնք հրապարակուեցան Կեդրոնական Դրամատան կողմէ՝ տնտեսական ճգնաժամի նախօրեակին եւ որ արգիլուեցաւ լիբանանեան դրամատուներուն՝ գործ ունենալ ինչպէս որ յայտնի է՝ թունաւոր ինչքերուն հետ (toxic assets): Նաեւ, ցուցմունքները, որոնք սահմանեցին դրամատուներու մասնակցութիւնը բնակարանային վարկերուն մէջ եւ լիբանանեան պետութեան բացերը ֆինանսաւորելու: Կեդրոնական Դրամատան քաղաքականութեանց հետ, պահպանողական դրամատուները եւս իրենց դերը կատարեցին հեռու մնալու համաշխարհային

տնտեսական ճգնաժամէն":

Պուլտուքեան կը շարունակէ, թէ լիբանանեան դրամատնային բնագաւառը այսօր շատ զօրաւոր վիճակի մէջ է, երբ միացեալ հաշուեկշիռը բնագաւառին 110 միլիարտ տոլարը կ'անցնի եւ ընդհանուր աւանդ դրուած գումարները 100 միլիարտ տոլարը կ'անցնին:

Անոր հետ միասին՝ լիբանանեան դրամատուները դուրս եկած են տարածաշրջանային եւ միջազգային ասպարէզ ինչպէս Սուրիա, Իրաք, Եգիպտոս, Յորդանան, Ալճերիա, Երոպա, Նիւ Եորք եւ յաջողած են դրական արդիւնքներ իրականացնել: Կ'աւելցնէ. "Լիբանանեան դրամատուները պէտք է ռիսքերու ղեկավարումը շարունակեն եւ ներդրողներու դրամները պաշտպանեն: Այս խնդիրները պիտի ըլլան դրամատուներու գլխաւոր մարտահրաւերներէն յառաջիկայ տարիներուն": Կեդրոնական Դրամատան նախկին կառավարիչը կ'եզրափակէ. "Լիբանանի տնտեսութիւնը ընդհանրապէս կը վայելէ դրական յատկանիշներ՝ ապա առեւտուրի կարգավիճակ, ապատախոհ տնտեսական քաղաքականութիւն: Ապագան խոստմնալից ու հանգստացնող է: Անշուշտ եթէ քաղաքական կայունութիւնը բարելաւուի, առաւել եւս տնտեսական կացութիւնը կը բարգաւառի:

ՊԵՅՐՈՒԹ՝ ԴՐԱՄԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Պեյրութի, որպէս տարածաշրջանի մէջ դրամական կեդրոն ըլլալու դերին մասին Պուլտուքեան կ'ըսէ. "40 տարիէ ի վեր, կ'ըսեմ վանգուածային լրատուութեան միջոցներով՝ որ Լիբանան դրամական յատկանշական կեդրոն է տարածաշրջանին մէջ: Ես, մինչեւ այս ժամը չեմ փոխած համոզմունքս:

– Խաւարումը, որ տեղի ունեցաւ ժամանակ մը առաջ Լիբանանի դրամական տարածաշրջանային դերակատարութեան՝ 1975էն ետք, վերջ գտաւ անվերադարձ: Համոզուած եմ որ Լիբանան մօտիկ ապագային ղեկավար դեր պիտի խաղայ որպէս դրամական գլխաւոր կեդրոնի՝ ոչ միայն շրջանին մէջ, այլ՝ ինչպէս որ նշած է Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ տուած դասախօսութիւններէն մէկուն ընթացքին՝ 1977ին առանցքային դրամական դեր պիտի խաղայ Լոնտոնէն Սինկափուր:

Լիբանանի յարաբերական վարգացած, պաշտպանուած եւ ճկուն դրամատնային համակարգը՝ առաւել եւս քաղաքական կայունութիւնը, Լիբանանին պիտի ապահովեն անհրաժեշտ առիթները, որ ըլլայ տարածաշրջանի դրամական առաջին տեղը (Banking Beyond Politics):

ՄԿՐՏԻՉ ՊՈԼՏՈՒՔԵԱՆ
Մայիս 16 2010